ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանի դատավոր Հ. Մովսիսյանին

Դիմող՝ թիվ ՇԴ/0072/01/15 քրեական գործով տուժողի իրավահաջորդ՝
Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչ՝
Արայիկ Միքայելի Զալյան
Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Հարգելի դատարան,

2016թ. փետրվարի 26-ին սույն գործով տեղի ունեցած դատական նիստի ընթացքում ցուցմունք տված վկաները պնդեցին, որ Վ. Պերմյակովի ձերբակալման օրը, Վ. Պերմյակովին ճանաչման գործողություններին, այնուհետև ՌԴ սահմանապահ զորքեր տեղափոխման գործընթացին մասնակցել և ներկա են գտնվել ՀՀ ոստիկանության թվով վեց աշխատակիցներ: Վկայակոչված ոստիկանության աշխատակիցների անուն ազգանունները ճշտելու և այնուհետև դատարան հրավիրելու համար, դեռևս 05.03.2016թ. ներկայացրել եմ գրություն ՀՀ ոստիկանություն:

15.03.2016թ. ՀՀ ոստիկանության կողմից ստացված պատասխան գրությամբ մերժվել է պահանջվող տեղեկատվության տրամադրումը, որն էլ անհնարին է դարձնում ներկայիս ներկայացվող միջնորդությամբ կոնկրետ անձանց անուն-ազգանուն նշելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վ. Պերմյակովի ճանաչման գործողություններին և այնուհետև ՌԴ սահմանապահ զորքեր տեղափոխման գործընթացին մասնակցած ՀՀ ոստիկանության աշխատակիցները տիրապետում են տվյալ գործողությունների արդյունքում պարզ դարձած որոշակի տեղեկություններ.

ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ոստիկանությունից պարզել, թե ովքեր են Վ. Պերմյակովի ձերբակալման օրը, վերջինիս հետ ճանաչման գործողություններին, այնուհետև ՌԴ սահմանապահ զորքեր տեղափոխման գործընթացին մասնակցած և ներկա գտնված ՀՀ ոստիկանության աշխատակիցների անուն-ազգանունները և զբաղեցրած պաշտոնները և հրավիրել որպես վկա հարցաքննության:

Կից ներկայացնում եմ՝ 15.03.2016թ. ՀՀ ոստիկանության թիվ 584 պատասխան գրությունը:

Դիմող՝ Ա. Զալյան

06.05.2016թ.